ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 55 Կիրակի 20 սեպտեմբերի 1915 Կիրակի 20 սեպտեմբերի № 55

ՓԱՅԼԱԿ

Քաղաքական, հասարակական ու գրական լրագիր

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԿԻՐԱԿԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Տարեկան գինը — 3 րուբլի, 1/2 տարուանը — 1 ր. 50 կ., 1 ամս. — 35 կ.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողատեղին՝ առաջին երեսի վրայ—20 կոպ, վերջին ,, ,, —10 ,,

Հասցէն՝ Шуша, Редакція газеты ,,Пайлакъ''. Ганджунцев. ул. домъ Костандова. Schoucha, rédaction du journal ,,Phaïlak''.

ИЗВѢЩЕНІЕ.

Совѣтомъ старшинъ Шушинскаго Общественнаго Собранія назначено **ОБЩЕЕ СОБРАНІЕ** членовъ клуба на воскресенье, 20-го сентября 1915 г., въ 8 час. вечера по слѣдующимъ вопросамъ:

1. Объ ассигнованіи суммы для устройства канализаціи и тротуара по Бульварной улицѣ, согласно предложенію Шушинской Городской Управы.
2. Разсмотрѣніе заявленія Помощника Шушинскаго Уѣзднаго Начальника М. Б. Нодія, объ инцидентѣ, имѣвшемъ мѣсто на Общемъ Собраніи отъ 10 мая с. г.
3. Разсмотрѣніе заявленія 36 членовъ клуба объ открытіи входа въ Собраніе С. Хачіева.

Такъ какъ настоящее Общее Собраніе членовъ назначается вторично, то на основаніи § 59 устава, оно будетъ считаться законнымъ, при всякомъ числѣ присутствующихъ членовъ.

СОВѢТЪ СТАРШИНЪ.

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐ

Ռուս հասարակական կեանքի ուշադրութեան արժանի երևոյթն վերջերս հանդիսանում էր այն տրամադրութիւնը, որ ստեղծուել էր Պետական Դումայի փակումից յետոյ քաղաքների միութեան և զեմստվօյական միութեան համագումարներում, որոնք տեղի ունեցան Մոսկւայում։ Զեմստվօյական համագումարը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, ընդունել է մի որոշում, որի մէջ անհրաժեշտ է համարում պատերազմը տանել մինչև վերջ, վերսկսել Պետական Դումայի գործունէութիւնը, իշխանութիւնը յանձնել հասարակական վստահութիւնը վայելող կաբինետի։ Ընտրուած է մի պատւիրակութիւն Թագաւոր Կայսրին ներկայացնելու համագումարի բաղձանքները։ Նոյնանման որոշումներ կայացրել է նաև քաղաքների միութեան համագումարը։ Մի խօսքով, մենք տեսնում ենք, որ հասարակական բոլոր քիչ թէ շատ յառաջադէմ շրջանները, գիտակցող խաւերը շարունակում են այստեղ էլ արտայայտել այն ցանկութիւններն ու բաղձանքները, որոնք կապուած են Ռուսաստանի ներքին բարեփոխման ու վերանորոգման հետ, որից և կախուած է պատերազմի վերջնական յաղթանակը։ Բաղձանքներ, որոնք ահա քանի ամիս է, գրեթէ ամբողջ կէս տարի է, զբաղեցնում են մտքերը, բայց և որոնք մնում են տակաւին անմարմին, անիրագործելի, շնորհիւ այն խոչնդոտների և այն ճակատագրական արգելքների, որոնք յարուցել են յանապազ իւրաքանչիւր հասարակական կազմակերպման հանդէպ, հասարակական ուժերի համախմբման բոլոր դէպքերում։ Եւ այսօր մենք կարդում ենք հեռագրական վերջին տեղեկութիւններում, թէ կառավարութիւնը որոշել է պետական հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի ուժով հաստատել քաղաքական նախնական գրաքննութեան (ցենզուրայի) օրէնսգիրքը,

Ուրեմն այն անվստահութիւնն ու բացասական վերաբերմունքը, որ տածել է իւր ամբողջ կեանքում կառավարութիւնը միշտ դէպի հասարակական ուժերը, տակաւին պահպանում են նախկին ոգին։ Եւ դա զարմանալի չէ, չնայած, որ վերջերս մի քանի մինիստրներ ամեն մի յարմար պատեհին Պետական Դումայի և հասարակական համագործակցութեան հասցէին համակրական ձգտումներ էին ցոյց տալիս։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՀՈՐԻԶՈՆԸ ՆՈՐԻՑ ՄԹԱԳՆԵՑ

Պատերազմի հէնց սկզբից, մանաւանդ անգլօ-ֆրանս պատերազմական նաւատորմղի Դարդանէլում երևալու օրից, կռւող կողմերի ուշադրութեան առարկայ դարձան Բալկանեան պետութիւնները, Ռումինիան, Բուլգարիան և Յունաստանը։ Հակառակորդ կողմերն ամեն ճիգ ու ջանք գործադրում էին այդ պետութիւններին իրենց կողմը գրաւելու, պատերազմական թատերաբեմ գրաւելու, ի նկատի ունենալով այն հսկայական ծառայութիւնը, որ կարող են կատարել այդ պետութիւնները և այն ծանրակշիռ ազդեցութիւնը, որ կունենան նրանք պատերազմի ընթացքի վրայ իրենց միջամտութեամբ։ Պատերազմող կողմերի այլ և այլ գրաւիչ խոստումները մի կողմից, պատերազմից սպասւող վտանգներն ու վնասները միւս կողմից ստեղծել էին մի տարտամ և տատանումներով հարուստ դրութիւն Բալկանների համար և այդ պետութիւններից ոչ մէկը չէր խիզախում վճռական քայլի դիմել։ Սակայն, ինչպէս երևում է գերմանական ոսկին, խոստացած ոսկէ սարերը և Տաճկաստանի զիջած հողամասերը կուրացրին Բուլգարիային և նա վերջ ի վերջոյ որոշեց անցնել Ռուբիկոնը։ Բուլգարական մինիստր-նախագահ Ռադոսլավովին հանգիստ չտւին էնվէր փաշայի դափնիները, և նա Բուլգարիան գլորեց աւանտիւրաների գիրկը։ Սուլթանի և բուլգարական թագաւորի կողմից ստորագրած թուրք-բուլգարական համաձայնութիւնը, որի զօրութեամբ Բուլգարիան ստանում է Տաճկաստանից Տէնջիից արևմուտք ընկած հողամասերը։ Թէև մինիստր-նախագահը յայտարարում է, թէ Բուլգարիայի քաղաքականութիւնն ապագայում ևս նոյնը կը մնայ, ինչ որ առաջ էր, այսինքն չէզոքութիւն, բայց զինուած չէզոքութիւն. սակայն և այնպէս հեռագրական հաղորդագրութիւնից երևում է, որ Բուլգարիան այսպէս թէ այնպէս պատրաստւում է մասնակցել պատերազմական գործունէութեան, զօրքեր հանել ընդդէմ Սերբիայի և հարկաւոր դէպքում Յունաստանի։ Հէնց այդ հանգամանքով էլ պէտք է բացատրել Բուլգարիայի զօրահաւաքը։

Սառնասիրտ հանդիսատեսի դեր ստանձնել չեն կարող անշուշտ բուլգարական զօրահաւաքի նկատմամբ ոչ Բալկանեան միւս պետութիւնները և ոչ էլ քառեակ համաձայնութիւնը։ Քաղաքագիտական շրջաններից հաղորդւում է, որ քառեակ համաձայնութիւնն առայժմ, քանի որ Բուլգարիան սահմանափակւում է զինուած չեզոքութեամբ, խուսափում է վճռական միջոցների դիմել ընդդէմ Բուլգարիայի, բայց հէնց որ բուլգարները ոտք կը կոխեն սերբիական Մակեդոնիա, քառեակ համաձայնութիւնը կը դիմի իր անելիքին։ Բուխարեստից „Р. У." թերթին ուղղած հեռագրի համաձայն քառեակ համաձայնութեան պետութիւնների դիպլոմատիան յայտարարել է արդէն Բուլգարիային, որ եթէ նա յարձակւի Սերբիայի վրայ, հիւսիսային Մակեդոնիայում կը հանդիպի անգլօ-ֆրանս զօրքերին, իսկ հարաւային Մակեդոնիայում Իտալական զօրքերին և այդպիսով ստիպւած կը լինի կռւի բռնուել համաձայնութեան պետութիւնների հետ։ Իսկ կռւի բռնուել քառեակ համաձայնութեան հետ Բուլգարիայի համար չափազանց դժուար է և նա դրանով կարտի վրայ է դնում իր գոյութեան խնդիրը, որպէս անկախ և միւս պետութիւնների շարքում տեղ ունեցող պետութիւն։ Եթէ յաջողւի նոյն իսկ գերմանական զօրքին Սերբիան կոխտալով անցնել Բուլգարիա և այնտեղից Պօլիս, դարձեալ Ռադոսլավովի կառավարութիւնը կը կրի մեծ ֆիասկօ և ակնկալած բարիքների փոխարէն Բուլգարիային կը տայ մեծամեծ բարոյական ու նիւթական վնասներ, որոնք մահու չափ ազդեցութիւն կունենան բուլգար ժողովրդի կեանքի վրայ։

Թէ ինչ դիրք կը բռնեն Բալկանեան միւս պետութիւնները—Ռումինիան և Յունաստանը, դժուար է ասել. հեռագրական տեղեկութիւնները հաստատում են, որ Յունաստանն էլ արդէն զօրահաւաք է յայտարարել և պատրաստութիւն է տեսնում հարկ եղած ժամանակ զօրք հանել Բուլգարիայի դէմ։ Ռումինիան էլ զօրքեր է կենտրոնացնում Աւստրիական սահմանում։ Այսպէս թէ այնպէս նորից մռայլւում է Բալկանների հորիզոնը, նորից մութ մութ ամպերը կուտակւում են նրա երկնակամարում։ Ամեն մի բարոյականութիւն ու բարոյական նորմաներ հեգնող պետական քաղաքականութիւնը իրար դէմ է աշխատում հանել երեկւայ միասին գործողներին ու կռո-

ւողներին, պետական շահի սխալ կամ ուղիղ ըմբռնումը ստիպում է քաղաքագէտներին բարեկամաբար սեղմել այն ձեռքերը, որոնք դարերով շաղախուած են եղել նոյն այդ պետութեան հարազատ զաւակների արիւնով, և ամարդի կերպով աքացի տալ, յանուն նոյն այդ շահերի, երեկուայ բարեկամին, որի առջև տարիներ շարունակ խունկ է ծխել։ Մի աւելորդ օրինակ ևս համոզելու փիլիսոփաներին, որ քաղաքագիտութիւնը և քաղաքականութիւնը նոյնչափ հեռու են բարոյականութիւնից և արդարութիւնից, որչափ երկինքը երկրից։

Նորայր

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Վերջապէս մեր դաշնակիցները սկսել են իրենց առաջխաղացումը. հեռագրական հաղորդագրութիւններին նայած անգլօ-ֆրանսիական զօրքերը վերջին օրերը յետ են մղել գերմանացիներին, մեծ կորուստներ նրանց հասցնելով։ Գրեթէ մի ամբողջ տարի ֆրանս-գերմանական ճակատում տիրապետում էր խրամատային կռիւ, որ պէտք էր վերագրել մեր դաշնակիցների անպատրաստ լինելուն։ Մինչդեռ Գերմանիան այս պատերազմին պատրաստւում էր մանրազնին յամառութեամբ 40 տարիների ընթացքում, կուտակելով հսկայական ռազմական պաշար. նա կարիք չի զգում ներկայումս լարել իր ներքին ուժերը այն չափով ռազմամթերք և կռւող ուժեր պատրաստելու, ինչպէս Ֆրանսիան և մանաւանդ Անգլիան։ Ըստ երևոյթին այժմ մեր դաշնակիցներն իրենց զգում են որոշ չափով պատրաստուած և իրականանում են արդէն ֆրանսիական հրամանատար գեներալ Ժոֆրի խօսքերը, որոնցով նա մի քանի ամիս առաջ դիմել էր իւր զինուորներին, խոստանալով, որ հոկտեմբերին նա վճռական կռիւ կը տայ գերմանացիներին Ռէյն գետի հովտում։ Անշուշտ այն յաջողութիւնը, որ այժմ ունեցել են անգլօ-ֆրանսիական զօրքերը Արրասի շրջանի հիւսիսային մասում և Շամպայնում, Ռէյմսի ու Վէրդէնի միջև, ընդհանուր առմամբ մօտ 70 կիլոմետր երկարութեան ճակատի վրայ, կունենայ իւր ազդեցութիւնը յետագայ կռիւների յաջող ընթացքի վրայ և մանաւանդ այն տրամադրութեան վրայ, որ ստեղծել էր վերջերս մի կողմից՝ ռուսական զօրքերի շարունակւող նահանջի և միւս կողմից՝ Բուլղարիայի դաւաճան դիրքի պատճառով։

ՄԵՐ ԴԱՆԴԱՂԿՈՏՈՒԹԻՒՆԸ

Ամեն անգամ, երբ խօսք է լինում փախստականների մասին, մենք միշտ էլ արձանագրում ենք, որ Շուշին զբաղուած է առայժմ նախապատրաստական գործունէութեամբ. մարդիկ են ուղարկւած գաւառի տնտեսական դրութիւնն ուսումնասիրելու, լիազօրներ են ուղարկւած նիւթական օժանդակութիւն խնդրելու, կոմիսիա է ընտրւած տուրքերը կանոնաւոր բաշխելու և այլն և այլն։ Այժմ էլ փախստականների ընդունելութեան և պահպանման խնդիրը տեղի է տւել նրանց որբերի ընդունելութեան և պահպանման խնդրին և սակայն Շուշին զբաղուած է դարձեալ նոյն նախապատրաստական գործերով։ Թէ երբ պէտք է վերջանայ այդ նախապատրաստական շրջանը և Շուշին գործի դիմի, դժւարանում ենք ասել, միայն մի բան կարելի է հաստատ ասել, որ մինչև Շուշին գործի կանցնի, դժւար թէ այլ ևս որբերի խնդիր լինի հրապարակում. մեծ մասը տեղաւորւած կը լինեն արդէն զանազան քաղաքներում, փոքր մասը, Շուշու բաժինը, աչքերը փակած յաւիտենական քնով։

Այդ հանգամանքը սակայն չի ծանրանայ շուշեցու խղճի վրայ, որովհետև նա սիրում է ամեն ինչ հաշւով անել, տաս չափել մէկ կտրել. նա մտածում է որբերի ապագայի մասին. չէ՞ որ մի տարով չպէտք է պահի նրանց, այլ երկար տարիներ, մինչև որ նրանց չափահաս դարձնի, պատրաստի նրանցից խելահաս, գիտակից քաղաքացիներ և այնպէս ուղարկի իրենց հայրենիքը։ Գուցէ և կան անհատներ, որոնք անկեղծօրէն այդպէս են դատում և մտածում, բայց բոլորը այդկերպ արտայայտողների մասին, դժբախտաբար, չենք կարող նոյնն ասել։ Այդ պատճառաբանութիւնը շատերի համար պատրւակ է միայն, գործը դժւարացնելու և ժխտելու միջոց։ Անձնական, անհատական շահը, ամսական մի քանի րուբլուց զրկւելու երկիւղը շուշեցուն դարձնում են հեռատես, ապագայի մասին մտածող և եթէ կուզէք, իբր թէ մարդասիրական զգացմունքներով տոգորւած դէպի որբերը։ Շուշեցին չի ցանկանում մահւան ճիրաններում դալարւող որբերին ապաստան տւած լինել. Թէկուզ մի տարով փրկել մահւան դատապարտւած հարիւր որբի կեանք, հէնց այդ որբերի բարիքն ու օգուտը ի նկատի ունենալով (sic!)։ Ոչինչ չէինք ունենալ ասելու, գուցէ և կը համաձայնէինք այդ ձևով պատճառաբանողների հետ միջնադարեան սոփեստները, բայց մենք ապրում ենք մի այնպիսի տագնապալի շրջանում, որ փիլիսոփայելու ոչ մի տրամադրութիւն չի ընձեռում մեզ և ոչ էլ ներում է է խաղալ մարդկանց կեանքի հետ։ Գործ է պահանջւում, գերագանց զոհողութիւն է պահանջւում, ամեն մի հայի կողմից և այն էլ շուտափոյթ, առանց ձգձգելու։ Ամեն մի շաբաթը, նոյն իսկ ամեն մի օրը, որ մենք կորցնում ենք մեր պատմական նախապատրաստութիւններով, ծխական, կոմիտէական ու կոմիսէական ժողովներով, հարիւրաւոր որբերի կեանքին է հաւասարազօր։ Անմեղ, ակամայ և անգիտակից կերպով մենք դահիճներ ենք դառնում հարիւրաւոր ապաբախտ որբերի։

Եւ մի՞թէ իրօք կարիք կայ շաբաթներով մտածել ու նախապատրաստւել 100 որբերի ապաստան տալու համար, երբ այդ որբերի պահպանումը պահանջելու է Շուշու հայութիւնից ամսական 1000 րուբլի։ Թող լինի 1500 րուբլի. մի՞թէ Շուշին այնքան ընկած է, այնքան նիւթապէս ու տնտեսապէս քայքայւած, որ չի կարող ամսական 1500 րուբլի զոհաբերել ընդհանուր ազգային աղէտի սեղանին։ Դժւարանում ենք հաւատալ, հաստատ համոզւած ենք, որ ցանկութեան դէպքում Շուշին հնարաւորութիւն ունի շատ աւելի զոհաբերելու, քան պահանջւում է, մանաւանդ որ մինչև այժմ նրա տւածները կոպէկներ են եղել։ Ո՛չ, պարոններ, մենք կեղծում ենք. կամ հրապարակ գանք, բաց ճակատով ասենք, որ չենք ցանկանում մեր կոպէկները նւիրաբերել յանուն թշւառացած որբերի, կամ վերջ տանք շուտափոյթ մեր նախապատրաստութիւններին ու գործի անցնենք։

Ն.

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Գաղթականներին օգնելու նպատակով Թեմական դպրոցի դահլիճում ամսոյս 13-ին կայացած քաղաքիս հայ համայնքի ժողովում իմ արտայայտածն առիթ է տւել որոշ խաւերի անգոհունակութեան, շնորհիւ՝ յիրաւի սխալ ըմբռնման։

Թիւր մեկնութիւնների առիթ չտալու համար, անհրաժեշտ եմ գտնում ստորև առաջ բերել իմ ասածները։

«Հայ իրականութիւնը երբեք այնքան անմխիթար վիճակի մէջ չէ եղել, որքան այժմ։ Այժմ, երբ Թիւրքահայաստանը ամբողջովին սրի և կրակի է մատնւած և մենք շատ քիչ ենք աշխատում անհետացած Հայաստանի բեկորներն անգամ փրկելու՝ այդ համազօր է մեր ոչինչ չանելուն։ Չենք մատնում արդեօք մահւան երբեմնի չէն Հայաստանի այսօրւայ հիւանդ ու ու քաղցած մնացորդ հայերին—մեր անտարբեր վերաբերմունքով։ Մի ազգ, որ իւր եղբայրակիցների ջնջման նըկատմամբ սառնասիրտ է, պարզ է, որ նպաստում է իւր իսկ ազգի կործանման։ Եթէ կարող ենք օգնել ու չենք օգնում (մինչ այսօր մեր արածները մի կաթիլ է ովկիանոսի ջրի համեմատութեամբ), եթէ չարիքի առաջը կարող ենք առնել ու չենք առնում, եթէ մեր

ԹԵՐԹՕՆ

***

Գիտեմ ես, գիտեմ, որ երբ դադարի
Վհատ թռթիռը իմ ջահել սրտի,
Եւ մահւան ջահերն անվերջ դողդոջ
Վառուին, պլպլան շուրջ իմ դագաղի՝
Դու լուռ ու դանդաղ, լացից նւաղած՝
Կը գաս, կը փարես իմ անշունչ մարմնին,
Եւ քո սևորակ, անլաց աչքերից
Արցունքները հէք կիջնեն իմ դէմքին...
Ես գիտեմ, որ երբ տխուր համրաքայլ
Դէպ իր փոսն իջնի դագաղը իմ հէք,
Եւ հազար աչքեր տխուր ու մռայլ
Նայեն դէպի իմ դէմքը վշտաբէկ,
Այն ժամ դու կը գաս և վերջին անգամ
Քո անվերջ հպարտ աչքերից իջնող
Արցունքներով ջինջ ու նւիրական
Կցօղես դէմքս՝ անկեանք ու անշող...
Բայց. ա՜խ, ես գիտեմ, գիտեմ, երբ անցնեն
Լացի օրերը տխո՜ւր ու մռայլ,
Երբ որ երգս էլ տխո՜ւր, վշտակերտ
Քո շուրջը մահով լռի առյաւէտ,
Ա՛խ, այն ժամ, գիտեմ, որ պիտի մնայ
Շիրիմն իմ անտէր... Եւ քո աչքերում
Արցունքի փոխան, գիտեմ, կը խաղայ
Քո վաղուց ատած քրքիջը անհուն...

Շուշի

Լ. Վարդունի

ՊԱՏՐԱՆՔ

Չըգիտեմ ո՞վ էր, ինձ կանչեց իր մօտ,
Կախարդ խօսքերով իմ հոգին գերեց,
Իմ կեանքին նետեց մրմուռ ու կարօտ,
Սէր ու բերկրանք,
Վայելք ու պատրանք,
Ժպիտ ու տխրանք։

Նա տւաւ երգում, որ սիրենք իրար,
Տւաւ ինձ վարդեր, որպէս սիրոյ նշան,
Համբուրեց ամուր, որ սիրեմ երկար.
Իմ հոգում քնքուշ,
Անմոռաց մի յուշ
Մնայ միշտ անուշ...

Չըգիտեմ ո՞վ էր, ինձ փայից ծածուկ,
Ծանօթ յուշերի խօսք ասաց սրտիս.
Երազի պէս լո՜ւռ, տխուր ու դալուկ
Նա անցաւ գնաց.—
Իմ կրծքում անցա՜ւ,
Սիրոյ մի վառ փո՜ւշ,
Մի նոր արշալոյս
Թողեց մշտական,
Միշտ էլ գիւթական...

Գառնիկ Ղազարեան

Ռ. ԹԱԳՈՐԻՑ

1.

Սիրտ իմ, լուռ կաց, թող քաղցրութեամբ անցնի անջատման ժամը...

Թող դա լինի կատարելութիւն և ոչ թէ մահ...

Թող սէրը դառնայ յիշողութիւն և տառապանքը՝ երգ։

Թող մի թռիչք կատարէ դէպի լազուրը՝ բնի մօտ ծալելով թևերը։

Թող քո ձեռքերի վերջին հպումը լինի այնպէս մեղմ ու քնքոյշ, ինչպէս գիշերային հպումը ծաղկի։

Օ, գեղեցիկ վերջ, դադարեցրու վարկեանը և լռութեան մէջ քո վերջին խօսքն ասա...

Ես քեզ կը ողջունեմ և քո ճամբան լուսաւորելու համար կը պարզեմ իմ լապտերը...

2.

—Նայիր, սիրելիս, շշնջաց նա ինձ։

—Հեռացիր—բարկացայ ես. իսկ նա մնաց անշարժ.

Կանգնել էր և ձեռքերս բռնել։

—Թող, ասացի ես. իսկ նա չէր թողնում։

Նա մօտեցաւ ականջիս,

—Չես ամաչում,—դարձայ ես նրան. իսկ նա անշարժ էր, չազդեց։

Նա շուրթերը մօտեցրեց այտերիս. ես դողացի և ասացի.

—Դու շատ հեռու անցար։

Բայց նա չամաչեց.

Նա ծաղիկը խրեց վարսերիս մէջ։

—Իզուր, ասացի ես, իսկ նա չշարժւեց, կանգնած էր։

Եւ նա վերցրեց իմ վզից հիւսկէնն ու գնաց. ես արտասւում եմ ու հարցնում իմ սրտին.

—Ինչո՞ւ նա չդարձաւ։

3.

— Մի առաւօտ ծաղկանոցում մի կոյր աղջիկ տւեց ինձ Լոտոսի տերևով փաթաթւած ծաղկեայ շղթան։

Շղթան վզիս փաթաթեցի, և արցունքները փայլեցին իմ աչքերում։ Ես նրան համբուրեցի և ասացի.

—Կոյր ես դու ու քո ծաղիկները։

Եւ դու էլ չգիտես, թէ որքան թանկագին է քո նւէրը։

4.

Ընկեր, մի ծածկիր քո սրտի գաղտնիքը. կամաց, ասա միայն ինձ։

Ինչո՞ւ ես այդպէս ծիծաղում, այդպէս քնքոյշ շրջում, նրանք լսելի են իմ սրտին, բայց ոչ ականջներիս...

Գիշեր է. տունը՝ լուռ. թռչունների բները երազներով են լցւած։

Դառն արցունքների, քնքոյշ ժպիտների, քաղցր ամօթի և վշտի միջից յայտնիր ինձ քո սրտի գաղտնիքը, միայն ինձ, սիրելիս...

5.

Քանի որ դու այդպէս ես ցանկանում, էլ չեմ երգի։

Քանի որ քո սիրտը աղմկում է, էլ չեմ նայի քո աչքերին...

Եթէ դու վախենում ես իմ զբօսնելուց, էլ չեմ անցնի քո պարտէզի մօտից... Քանի որ իմ թիակից ջուրը շատ է աղմկում՝ էլ չեմ մօտենալ նաւով քո ափին։

Թարգ. Հ. Վարդունի

ամբողջ գործունէութիւնը բարի ցանկութիւնների շրջանից, փրազներից դէնը չի անցնում, նշանակում է՝ ինքներս էլ ցանկանում ենք մեր հարազատ ազգի ջնջուելը, կորչելը, անհետանալը. երբ մեր ցանկութիւնն այդպէս է, հաւատացէք պարոններ, որ ոչ մի յորդոր, ոչ մի խրատ կամ դիմում չէ կարող այդպիսի մի ազգի անդամների քար սրտերը շարժել... Ուրեմն, մի զարմանաք, որ ազգը ձեռից ընկնում է, որ ազգը մեռնում է...

Իսկ եթէ դուք դեռ կարծում էք, թէ մենք ընդունակ ենք մեր տարաբաղդ եղբայրներին օգնելու, եկէք հաւատանք, որ այդպէս է և մօտենանք հարցին այդ կողմից։

Հիւսագիրները մեզ լուրեր են բերում, որ հարիւր հազարաւոր գաղթականներ սոված են, տասնեակ հազարներով հիւանդ, իսկ օրեկան մեռնում են մի քանի հարիւրներ։ Կարիքը շատ է մեծ. լայն օգնութեան անհրաժեշտութիւնն է մեր առաջ կանգնած։ Ո՞վ կարող է շատ տալ. նա, ով շատ ունի. հայ հարուստը, հայ վաճառականը։ Սակայն այս մի չարաբաղդ տարուայ փորձը ցոյց տուեց, որ հայ ունեոր դասը անտարբեր է դէպ իր ազգային աղէտը։ Հայ բուրժուան ցոյց տուեց իր իսկական ատամները։ Նա անուշադիր է դէպի սովից ու համաճարակից հազարներով կոտորուող այն մասսան, որի արիւնը ծծելով է նա դիզել իր հարստութիւնը, վիրացրել իր մարմինը, ճարպոտել։ Այս դասակարգի վերաբերմունքը դէպի նման չտեսնուած ազգային զուլումը և էն էլ այսպիսի արտակարգ պայմաններում, մի աւելորդ անգամ էլ ապացուցում է, թէ ինչպէս կապիտալն է համաշխարհային, այնպէս էլ կապիտալիստը ազգը հայրենիք չի ճանաչում. կամ եթէ վերջիններս նրա համար գոյութիւն ունեն, այդ միայն այն չափով, ինչ չափով իր սեպհական, դասակարգային շահերն են պահանջում այդ։

Այժմ, ո՞վ կարող է, ո՞վ քիչ թէ շատ տրամադիր է օգնելու կարօտեալներին. հայ միջին և աշխատաւոր դասակարգը։ Սակայն սրանցից էլ քիչ բան ունենք սպասելու, որովհետև այն գիտակցութիւնն ու հասունութիւնը չունին, որ կարողանան իրենց հայրենասիրական կամ քաղաքացիական պարտքը կատարելու, առանց խթանի առանց կազմակերպման։

Ո՞վ պէտք է լինի սրանց կազմակերպողը. հայ ինտելիգենցիան։ Բայց չէ՞ որ այս վերջինս էլ կազմալոյծ դրութեան մէջ է և անհրաժեշտ է սրան, հէնց իրեն կազմակերպուել։

Օգնութեան գործը պէտք է կազմակերպի հայ ինտելիգենտը (բայց ոչ այն ինտելիգենտ համարուածները, որոնք ժողով գումարելով, իրենք են բացակայում իրենց հրաւիրած ժողովներից) միջին և աշխատաւոր դասի մէջ, որից գուցէ որևէ քիչ թէ շատ զգալի. լուրջ բան առաջանայ։

Գալով որբերին, ես էլ կողմնակից եմ նրանց մեզ մօտ, Շուշի, բերելուն, հաւատանք, որ երբ տեղացիները իրենց աչքով տեսնեն անհետացած Հայաստանի բեկորները, գուցէ քարացած սրտերը քիչ կակղին»...։

Գրիգորիս Տէր-Աւետիքեան

ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

Անցեալ 1911 թւին քաղաքիս ձայնաւորները վառ յոյսերով և ակնկալութիւններով միաձայն ուագի պաշտօնի են հրաւիրում պ. Մ. Տէր-Գրիգորեանին. Պ. Տ.-Գրիգորեանը, ստանձնելով իր պաշտօնը, հէնց առաջին օրերից սկսեց մեծ եռանդ ցոյց տալ քաղաքիս շահերի և բարեկարգութեան նկատմամբ։ Պատահում էր, որ օրեկան երկու անգամ ժողովի էր հրաւիրում ձայնաւորներին, միասին շրջում ամբողջ քաղաքը և գրի առնում նրա մի շարք պակասները, որպիսիք են — սալայատակների, փողոցների ուղղում, փշէ ցանկապատերի վերացում, քաղաքիս արևմտեան կողմից անձրևներից յորդացող ջրերի հոսանքների կանոնաւորումը, որը մեծամեծ վնասներ կարող էր պատճառել քաղաքին, քաղաքիս միակ զբօսավայրի կանոնաւորում և այլն։

Ծրագրուեց ի կատար ածելու այն բոլոր կարիքներն, որոնք կան Գորիսում և անհրաժեշտ են վերացնել։

Ապա ընտրուեցան յանձնաժողովներ, որոնցից 1) տարեկան մի անգամ պէտք է հաշիւները քննէր. 2) քաղաքային ինքնավարութեան համար բնակարան վարձէր և 3) Տների գնահատութիւնը կատարէր (оцѣнка)։

Քաղաքացիք և ձայնաւորները, տեսնելով ծրագրուող մի շարք ձեռնարկութիւնները, անչափ ուրախացան։

Սակայն անցան մի քանի ամիսներ և ահա նկատուեց, որ պ. քաղաքագլուխը 1500 ր. ծախսել է, մի քանի տեղից հող քանդելով և այլ տեղեր թափելով, որ բոլորովին աննպատակ էր։ Քանդում է նաև զբօսավայրի ցանկապատն և ռուսաց եկեղեցու կից բակը խառնում է զբօսավայրին։ Ահա այդ ժամանակ քաղաքացիներն և ձայնաւորները տրտունջ են բարձրացնում քաղաքագլխի այդ աւելորդ և ապօրինի արարքի դէմ։ Հէնց այդ իսկ նկատողութիւնից սկսած անտանելի ատելութիւն և թշնամանք է առաջանում պ. ուագի կողմից դէպի այն ձայնաւորները, որոնք համարձակութիւն են ունեցել արտայայտել աննպատակ ծախսերի և զբօսավայրի ցանկապատը քանդելու մասին։

Մինչ այդ մի քանի ամսուայ ընթացքում ինքնավարութեան բնակարանն երեք տեղ է փոփոխւում, լոկ ուագի կամքի և ցանկութեան շնորհիւ. ժողովների ժամանակ յաճախ ձայնաւորները սխալմամբ հին բնակարաններն էին մտնում և այնտեղ միայն իմանում, որ տեղափոխուած է ուրիշ բնակարան։ Ընտրուած կոմիսիայի բոլոր առաջարկած բնակարանները ինչ ինչ պատճառներով քաղաքագլխի կողմից հաւանութիւն չէին գտնում։

Տներ գնահատող յանձնաժողովը նախագահութեամբ պ. Տէր-Գրիգորեանի վերջացրեց տների գնահատութիւնը թէ չէ, սկսուեցին մեծ անբաւականութիւններ. այն տունը, որ պէտք է վճարէր 10 ր. տալիս է 4 ր. 20 կ., իսկ միւսը, որ պէտք է վճարէր 3 ր., տալիս է 7 ր. 20 կ.։

Անցաւ մէկ ու կէս տարի, վերջապէս հաշուետես կոմիսիան քաղաքագլխից պահանջեց ցոյց տալ հաշիւներն և քննութեան տակ առնել. սակայն պ. քաղաքագլուխը մերժեց այդ պահանջը, ուստի կոմիսիայի անդամները ստիպուած էին դիմել պ. Նահանգապետին։

Նահանգապետը լսելով ձայնաւորների այդ բողոքը, պ. Տէր-Գրիգորեանին պարտաւորեցրեց 1913 թ. օգոստոսին հաշիւներն անպայման յանձնել ընտրուած մարմնին վերստուգելու համար և ապա որոշումը մինչև սեպտեմբերի 1-ը առաջարկել ձայնաւորներին ի գիտութիւն։

Նոյն թւի օգոստոսի 23-ին պ. քաղաքագլուխը ստիպուած էր հաշիւները ներկայացնել ընտրուած մարմնին։ Ընտրուած մարմինը գտաւ որոշ թերութիւններ, որոնց մէջ և մօտ 1500 ր. առանց որոշման և վճռի արած ծախսեր, որի առթիւ հարկաւոր արձանագրութիւն կազմուեց։ Անցան տարիներ, սակայն պ. քաղաքագլուխը մինչև օրս էլ դեռ հաշիւ չի ներկայացրել և նրա բոլոր հաշիւները անյայտ են ձայնաւորներին։

Չորս տարուայ ընթացքում նահանգապետից հաստատուած ծախսելու փողերը, բացի ծառայողների և բնակարանի վարձերը, բոլոր գումարներն էլ մնում են չծախսուած։

Ներկայ 1915 թ. նախահաշիւն էլ յուլիսին մի շարք այլ հարցերի թւում առաջարկւում է ձայնաւորներին ստորագրելու, որը դարձեալ յետաձգւում է և նոյն ամսի 28-ին ներկայացւում է ստորագրելու։ Ձայնաւորները տեսնելով, որ առանց քննելու հաշիւ է առաջարկւում ստորագրելու, միաձայն, բացի երկու անձերից, յայտնում են, թէ քանի որ ձայնաւորները ոչ մի տեղեկութիւն չունեն ամբողջ 4 տարուայ հաշիւների մասին, հետևապէս և ոչ մի նախահաշիւ ստորագրել չեն կարող։ Պ. քաղաքագլուխը այն ժամանակ յայտնում է, թէ նախահաշուի պատճէն արձանագրութեամբ հանդերձ, որոնց մէջ և ստորագրութիւնների (դեռ չստորագրուած) պատճէնը ուղարկուած է նահանգապետին ի հաստատութիւն։ Ձայնաւորներն առարկում են, թէ քանի որ հարցը դեռ պաշտօնապէս չէ ներկայացրուած իրենց, ինչպէս է քաղաքագլուխը այդ ներկայացրել պ. նահանգապետին և կեղծել իրողութիւնը։ Այդ առթիւ պ. Տէր-Գրիգորեանը աւելացնում է, թէ ինքը հաւատացած է եղել, որ ձայնաւորները անպատճառ կը ստորագրեն, ուստի և ուղարկել է։ Իրողութիւնը պարզելուց յետոյ ձայնաւորները յուզուած և զայրացած ցրւում են։ Հետևեալ օրը 8 ձայնաւորներ հեռագրում են պ. նահանգապետին և խնդրում կեղծ, չստորագրուած նախահաշիւը չհաստատել։ Այդ մասին տեղեկութիւն է ստանում նաև պ. Տէր Գրիգորեանը։ Նա ձայնաւորներից յոյսը կտրած, դիմում է զանազան միջոցների և սկսում է ստորագրութիւններ հաւաքել իր բնակարանում, մէկ մէկ հրաւիրելով իրեն վստահելի անձերին։ Համոզում է սրանց, թէ ինքը եղել է քաղաքի շահերի պաշտպան, բարի և գործին նուիրուած պաշտօնեայ։ Այսպիսով կրկին անգամ վերընտրուելու համար հող է պատրաստում։

Շաբաթներով և ամիսներով անգամ ինքնավարութեան շէնքով չմտնող, ամենաչնչին գործը ձգձգող և անփութութեան մատնող մարդը կրկին իր քէտուփն է ցանկանում հասարակութեան առաջ դնել և անտես անելով իւր շրջապատում ստեղծուած արհամարանքն ու հիասթափութիւնը, նորից ձգտում ուագի պաշտօն ձեռք բերելու։ Ճիշտ է ասուած, թէ «մարդիկ մեծ դժուարութեամբ են իրանց պակասը նկատում»։

Աւօ

ԼՐԱՏՈՒ

ՇՈՒՇԻ

— Անցեալ կիրակի, ամսոյս 13-ին, Թեմական դպրոցի դահլիճում կայացաւ քաղաքիս հայ համայնքի ժողովը, որը լսեց Շուշուց ուղարկուած լիազօրների զեկուցումը և տեղի ունեցաւ գաղթականներին օգնելու համար մտքերի փոխանակութիւն։

— Երկուշաբթի ամսոյս 14-ին, Շուշու հասարակական ակումբը ամառային շէնքից տեղափոխուեց ձմեռային շէնքը։

— Մի շաբթից աւելի է քաղաքումս նաւթ չկայ. զանազան անկիւններում ծախւում է քիչ քանակութեամբ, փութը 20 կոպէկով։ Արժէ, որ քաղաքային ինքնավարութիւնը այդ մասին հոգ տանէր։

— Այսօր հասարակական ակումբում նշանակուած է անդամների ընդհանուր ժողով։

— Չնայած նրան, որ քաղաքումս նկատւում է մի քանի մրգերի առատութիւն, այնուամենայնիւ նրանց գները զգալի կերպով թանգ են։ Օրինակ թուզը, որ խանութների առաջը դիզած փթում է, փութը 8 կոպ. պակաս չեն տալիս։ Նա էլ արտասահմանից է գալիս։

ԿՈՎԿԱՍ

— Սեպտեմբերի 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, Բորժոմից Թիֆլիս ժամանեց կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը։ Սեպտեմբերի 18-ին ցերեկուայ ժամը 12 և 45 վարկեանին Թիֆլիսից մեկնելու է Ռուսաստան։ Իսկ սեպտեմբերի 24-ին Թիֆլիս կը ժամանի Ն. կ. Մ. Կովկասի Փոխարքայ Նիկոլայ Նիկոլաեւիչը։

— Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսեանը հեռագրով դիմել է Թիֆլիսի նահանգապետին, որ վերջինս կարգադրութիւն անի Բագւից նաւթ և մազութ ստանալու։ Նահանգապետը սեպտեմբերի 12-ին պատասխանել է, որ Կովկասեան շրջանային զինուորական հաղորդակցութեան գլխաւոր կառավարիչը ժամանակաւոր կարգադրութիւն է արել, որ շտապով վագոններ ուղարկեն Բագու՝ Թիֆլիս նաւթ և մազութ փոխադրելու համար։

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Խոյ, 25 օգոստոսի

Մեր խումբը, որ բաղկացած էր 750 հոգուց, պէտք է շտապով հասնէր Դիլման լրացնելու 7 Հ. խմբերի պակասը։

Մենք Խոյից դուրս եկանք դէպի Դիլման 18-ին օգոս. գիշերը ժամը 3-ին։ Երկար գնացինք, երբ մշուշի մէջ երևաց Վարդան Մեծի գերեզմանը, մի բարձր բլրի վրայ։ Մեր սրտերը թունդ բաբախում էին. արագ հասանք Տղմուտ գետի կամուրջին։ Ուրախութեանս չափ չկար. իմ առաջս փռուած էր Աւարայրի պատմական դաշտը և ես կանգնած էի Տղմուտի վրայ, դէմ ու դէմ նախարարների մատուռներին։

Լոյսը բացուելու վրայ էր, երբ առաջին շարքերում իրարանցում ընկաւ։ Ես ևս վազեցի այնտեղ և ինչ տեսնեմ. մի գաղթական կին ընկած է անշնչացած, աչքերը բաց են և դէպի երկինքն են նայում, ատամները այնպէս է սղմել իրար, որ կարծես կրճտացնում և անիծում է անգութ երկինքը. Նրա կողքին նստած էր իւր 6 տարեկան երեխան, որը սպասում էր մօրը զարթնելուն. բայց արդեօք կը զարթնի նա։

Բոլորիս տրամադրութիւնը փոխուեց, տխուր մտածմունքներով պաշարուած շարունակեցինք ճանապարհը, թողնելով դիակի և երեխայի մօտ 2 հոգի։ Դեռ այս տպաւորութիւնը չէր անցել մեզանից, երբ նորէն տեսանք մի այլ անշնչացած դիակ ճանապարհի տակ ընկած։ Յետոյ մենք պատահեցինք երրորդ, չորրորդ և այսպէս անդադար մինչև Դիլման մօտաւորապէս 15 հոգի։ Նրանք բոլորն էլ հայեր էին, գաղթականներ, որոնք ընկել էին ճանապարհի այս ու այն կողմը, որը յոգնածութիւնից, որը սովածութիւնից, որը տարափոխիկ հիւանդութիւններից և մեռել էին։

Ծանր, տխուր մտքեր պաշարեցին ինձ։ Ինչու՞ կռուել, ու՞մ համար է մեր ձեռք բերելիք ազատութիւնը։ Եւ հայ

չի մնացել. ոմանց կոտորել են սոսկալի տանջանքներով. մնացածներն էլ գաղթել են, և ահա գաղթականութեան հետևանքները—այս անչուշինչ դիակները: Ես մտածում էի ու լալիս, որ ոչնչով չկարողացանք օգնել, քանի նրանք կենդանի էին:

Բայց մեռան և այնքան բաց աստղները վրէժ էին պահանջում մեզանից, այնքան դէպի երկինքը նայող սառած աչքեր, վրէժի կրակին էին սպասում:

Ենովք

ՄԻ ԱՆՅԱՋՈՂ ԴՐԱՄԱՇՈՐԹՈՒԹԻՒՆ

Գորիս. 10-ին սեպտեմբերի

Շուշուց տեղս եկած դրամաշորթների մի ինտերնացիոնալ խմբակի արարքը ահա մի ամբողջ շարաթ է, որ զբաղեցնում է Գորիսի և շրջակայքի մտքերը՝ աւազակապետ Սուլէյմանը և իր խմբակը պահ մի մոռացութեան է տրւում: Այս դրամաշորթութիւնը, որից ՚ի վերջոյ զոհ են գառնում իրենք դրամաշորթ պարոնները, անշուշտ հետևանք է ոսկի և մանր դրամի կրիզիսի. բայց զարմանալին այն է, որ կեղտոտ պատմութեան մէջ ընկնելու մեծ տրամադրութիւն է ցոյց տալիս և այսպէս կոչւած «վաճառականը», որի անմիջական շահը չէ պահանջում շատ էլ մօտ լինել մութ անձերին և տականքներին, սակայն մեծ է գայթակղութեան փորձութիւնը... և սահղծւած դրութիւնից՝ ներելի և աններելի միջոցներով շահելու տենչանքը շատ է զօրաւոր:

Հասարակութեան մէջ պտտւող լուրերից երևում է, որ երեք հոգի, որոնցից մէկը թուրք, երկուսը հայ, գալիս են Գորիս Շուշուց և ամենից առաջ ներկայանալով հարուստ համարւած Գարեգին քահ. Տէր-Մինասեանին, առաջարկում են նրան ոսկէ դրամ, որոշ «սարֆով»: Քահանան նրանց ճանապարհ է դնում: Դրամաշորթները այցելում են Դաւութլու գիւղի բնակիչ և Գորիսում մանուֆակտուրային առևտուրով զբաղւող Մաշադի Ղարային և առաջարկում 4000 րուբլի նոյն պայմանով: Հիւրասէր մաշադին ընդունում է նրանց իր տանը և ճոխ փլաւ է պատրաստում. բայց որովհետև ազատ գումար չէ ունենում, վճարում է միայն 1900 րուբլի, խոստանալով մնացորդը լրացնել մի քանի օրից: Հիւրերը ստանալով 1900 ր. համաձայնում են 4000 րուբլին թողնել տնատիրոջ մօտ այն պայմանով, եթէ վերջինս յանձն կառնէ տւած փողը պահել առանձին սնդուկի մէջ, բանալին յանձնելով հիւրերին: Այդպիսով կայանում է համաձայնութիւն և մինչ Ղաթարիհանքերը շտապող հիւրերի համար պաշարի պատրաստութեամբ կը զբաղւէր տնատէրը, հիւրերը սնդուկից հանում են փաթեթների գլխից իսկական ոսկիները և սնդուկը նորից փակելով, սիրով հեռանում են Մաշադի Ղարայի տնից, իւրաքանչիւրն իւր բաժին փլաւը տանելով իր հետ...

Դրամաշորթերի հեռանալուց յետոյ տնատէրը կասկածում է և կոտրելով սնդուկը, գտնում է իրեն ցոյց տւած փաթեթները, շաքարաւազով լցւած, սակայն առանց ոսկիների: Մի առժամանակ ոստիկանութեանը ոչինչ չէ յայտնում Մաշադի Ղարան, աշխատում է սեպհական միջոցներով գտնել իր կորուստը և երբ յաջողութիւն չէ ունենում, նոր միայն յայտնում է, որ իր տունը «կտրել» են հիւրերը: Սկսւում են ոստիկանական հետապնդումները և ինչպէս յետոյ երևում է, դրամաշորթ «հիւրերը» նախ գնում են Ղաթարի հանքերը, երեք նման դիտաւորութեամբ և ապա «առոք» կորցնելու համար վերադարձին անցնում են Տաթևի վանքը «ուխտի», Քարահունջ գիւղից հրաւիրելով իրենց ծանօթներին մատաղի: Ոստիկանական պրիստաւը և Գորիսի հասարակութեան տանուտէր Յակոբ Տէր-Յարութիւնեան կարողանում են «ուխտաւորներին» կալանաւորել Տաթևում, սակայն դրամը չէ գտնւում: Յետոյ է միայն պարզւում, որ դրամաշորթները մինչև կալանաւորելը 1900 րուբլին կարողանում են պահ տալ ծանօթներին և այդ բանը խոստովանում են Գորիսում: Տանուտէրը իր ստրաժնիկներով ուղարկում է ծանօթներին, որոնք իրենց հերթին խոստովանում են, որ փողը պահ են տւել հարևանուհի Բալախանում Տէր-Սահակեանին: Վերջինս նախ աշխատում է ուրանալ, բայց յետոյ սպառնալիքի տակ հանում է փողը—1825 րուբլին, ինչպէս իրեն յանձնւած է եղել:

Այժմ ոստիկանութիւնը կատարում է քննութիւն, շարան շարան քարահունջեցի կանանց Գորիս տանելով: Փողը վերադարձնում են իր տիրոջը. մէջ տեղ խայտառակւում են կողմնակի անձնաւորութիւններ, որոնք զոհ են իրենց թեթևամտութեան:

Մեզ թւում է, որ դրամաշորթերի հետ մի շարքում հասարակութիւնը իր զզւանքին պիտի արժանացնէ «վաճառական» Մաշադի Ղարային իր կեղտոտ և շահասիրութիւնից առաջացող կոմբինացիայի համար, իսկ օրէնքը և արդարութիւնը չպիտի յապաղի «հիւրասէր պարոնին և հիւրերին» հաւասարապէս մեղադրեալի նստարանի վրայ նստեցնելու:

Մ. Ե.

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՈՒՄ

Ամսոյս 8-ին Ղափանի շրջանի Զէյւայ գիւղի առաջին կարգի զինւորները գալիս էին դէպի Շուշի, հանդիպում են մի խումբ աւազակների: Զինւորների ասելով իրենց առաջ են դուրս գալիս աւազակները Հակաթի գետի աջ ափին «Սընդ» կոչւած տեղում: Խեղճ զինւորներից ամեն ինչ առնում են: Իրենց ասելով տանում են մօտ երկու հարիւր րուբլի: Նրանց բաղդից կողոպտելու ժամանակ գալիս են երկու լայիշ. հէնց նոյն ժամանակ, երբ աւազակները սկսել են հանել զինւորների շորերը: Զինւորներին թողնում են, սկսում են կողոպտել լայիշներին. այդ ժամանակ զինւորները թողնում, փախչում են: Լայիշների ասելով իրենցից տարել են մօտաւորապէս 200 ր. և բաւականի իրեր: Այժմ Ղափանի ներքին ճանապարհը փակւել է կողոպուտների պատճառով: Եկողները ստիպւած են լինում երեք օրւայ ճանապարհ կտրել, մինչդեռ ներքևով կարելի է երկու օր գնալ:

Ղ-ցի.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գերմանիայի ծրագիրները

Բեռլինից Շվէյցարիայ եկած մի չէզոք պետութեան դիւանագէտի խօսքերի համաձայն լրագիրները յայտնում են, որ ընդհանուրի կարծիքով գերմանական զօրքերը ձգտելու են գրաւել Ռիգան, այնտեղ ամրանալ խրամատներում և ապա ըստ կարելոյն շուտ զօրքեր տեղափոխել դէպի սերբիական ճակատը, որպէսզի Սերբիայի վրայով հասնել Կ. Պօլիս: Բոլոր աւստրիական զօրքերը պիտի ուղարկւեն իտալական ռազմաբեմը:

Ինչ վերաբերում է արևմտեան ռազմաճակատին, գերմանացիները դժւար թէ վճռականութիւն ունենան արշաւելու Կալէի կամ Փարիզի վրայ, որը սպառնում է նրանց մեծամեծ կորուստներով: Իսկ երբ յիշեցնում են գերմանացիներին Բուլղարիայի կողմից հնարաւոր դիմադրութեան մասին, նրանք պարծենալով պատասխանում են, թէ Բուլղարիայի կառավարութիւնը պահած ունեն իրենց գրպանում: Ներկայումս գերմանացիների նպատակն է հասնել մինչև Միջագէտք, բայց ոչ Փարիզ կամ Կալէ:

Թալաաթ-բէյի յայտարարութիւնը

Գերմանական «Berl. Tagebl.» թերթը գրել է Կ. Պօլսի իւր աշխատակցի զրոյցը թիւրքական ներքին գործերի մինիստր Թալաաթ բէյի հետ: «Բուլղարիայի հետ մենք արդէն համաձայնութիւն ունենք կայացրած: Ռումինիայի նկատմամբ կարող եմ ասել, որ այնտեղ իրերի դրութիւնն անփոփոխ է, (յայտնի է, որ Ռումինիան կտրականօրէն մերժեց թոյլ տալ իւր երկրով ռազմամթերք և այլ անցկացնելու դէպի Թիւրքիա): Ինչ վերաբերում է Սերբիային, Գերմանիայի փորձը արշաւելու Սերբիայի վրայ, խիստ թանգ կը նստի գերման զօրքին: Իսկ թղթակցի այն հարցին, թէ հնարաւոր է արդեօք գերմանական զօրքերի ուղարկելը դէպի Եգիպտոս, Թալաաթբէյը խորամանկ ժպտով պատասխանել է. «Գերմանացիներն առանց այն էլ շատ գործ ունեն Եւրոպայում, որպէսզի մտածեն դեռ ևս Եգիպտոսի մասին»:

Գերմանացիները Պօլսում

Ֆրանսիական թերթերը հաղորդում են, որ անցեալ տարւայ սեպտեմբերին Կ. Պօլսում կային ոչ աւելի քան 7,400 գերմանացի զինւորականներ: Ներկայումս նրանց թիւն այդտեղ հասել է 12 հազարից աւելի: Այդ թւումն են 1400 սպաներ, 7 հազար ենթասպաներ (ունտեր-օֆիցէր), ինստրուկտորներ և այլն, 150 օդաչուներ և 1000 հոգի բանւորներ, որոնք յատկապէս աշխատում են ռազմամթերանոցում:

Իտալացիները Դարդանէլում

«Berl. Tagebl.» խօսելով Դարդանէլի ռազմական գործողութիւնների մասին, գրում է, թէ արդէն հերթն հասաւ նաև Իտալիային: Մենք գերմանացիներս, ասում է այդ լրագիրը, սովորել ենք թեթև աչքով նայել իտալական զօրքի վրայ, բայց անհրաժեշտ է ի նկատի առնել, որ այդ տեսակ հայեացքը ճիշտ չէ: Իտալական թարմ ուժերի ժամանումը Դարդանէլ չի կարելի սեպել իբրև մի աննշան երևոյթ մօտակայ ապագայի համար և ընհակառակն հարկաւոր է լրջօրէն պատրաստել դորա դէմ:

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետր. հեռ. գործ.)

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԲԱՆԱԿԻՑ

Սեպ. 16-ին. Ֆրիդրիխշտատի հիւսիս արևմտեան շրջանում գերմանացիներն անյաջող յարձակումներ գործեցին Լիգգեր և Զուշկ գիւղերի վրայ: Վերսկալլէնից հիւսիս արևմուտք յարձակումները յետ մղւեցին հրացանային և թընդանօթային կրակներով: Դվինսկի տակ անընդհատ հրաձգութիւն է: Գերմանացիների յարձակումները Գեկէն գիւղի—Օգրոավէնտէն—Մեդմուզօկօ լճի ճակատում յետ են մղւած: Կռիւը շարունակւում է: Կրկվօի հիւսիս արևմտեան շրջանում, Օշմեանից հարաւ արևելք, թշնամին եռանդուն յարձակմամբ մի քիչ նեղեց մեր զօրքերին: Պրիպետից հարաւ թշնամին մի քանի անգամ յարձակւեց Չարտօրիսկը. սկզբում բոլոր յարձակումները յետ մղւեցին, բայց յետոյ հասած օգնական ուժերի միջոցով թշնամուն յաջողւեց մղել մեզ Ստիրի աջ ափը: Նովօ-Ալեքսինեց գիւղը սեպտ. 15-ին երեք անգամ յարձակման ենթարկւեց թշնամուց թնդանօթային մրրկալի կրակի օժանդակութեամբ, բայց ամեն անգամ էլ թշնամին յետ շպրտւեց մեր թընդանօթային և հրացանային ուժեղ կրակով: Ստիրպ գետի վրայ, Տարնօպօլից արևմուտք, Կուպչինցէ գիւղի շրջանում թնդանօթային կռիւը զարգանում է: Կատաղի կռւից յետոյ մեր զօրքերը գրաւեցին թշնամու խրամատները և և ամուր կէտերից մէկը՝ Խօդաչու գիւղից արևմուտք: Շարունակելով առաջ արշաւել՝ մեր զօրքերը ուժեղ հրային նախապատրաստութիւնից յետոյ յարձակման դիմեցին և ոչնչացնելով երկաթալարեր գրաւեցին թշնամու խրամատները՝ Կուպչիցէ գիւղի արևելեան շրջանում:

Արեւելեան ռազմաբեմ

Փարիզ. սեպտ. 16-ին. Գերմանացիներն ստիպւած եղան նահանջել Արռւայից՝ մաքրելով իրենց խիստ կերպով ամրացրած դիրքերը երկար ճակատի վրայ: Այդտեղ նրանք մեծ վնասներ կրեցին.—սպանւածների, վիրաւորների ու գերի ընկածների թիւը հասնում է 3 կորպուսի: Գերիների թիւը անցնում է 23.000-ից: Մեր վերցրած հրազէնների թիւը՝ 79:

Կռիւը Շամպայնում շարունակւում է անընդհատ ամբողջ ճակատի վրայ. գերմանացիների շարքերը նորից նւաճւեցին. գերիների թիւը հասնում է 1000-ի: Նոր յաջողութիւն ունեցանք Շամպայնում և մասամբ էլ Մասիուից հիւսիս. էլի գերի վերցրինք 800 հոգի:

Լոնդոն, սեպտ. 16-ին. Կռիւը շարունակւում է Լօօսի շուրջը և նրանից հիւսիս: Անցանք Լօօսից հարաւ և վերցրինք դարձեալ մի հրազէն, որ միւս վերցրածների հետ միասին անում է 21 հրազէն. մեր վերցրած գերիների թիւը անցնում է 3000-ից: Վերցրել ենք նաև 40 գնդացիր և ոչնչացրել բաւականաչափ գնդացիրներ: Այսօր մեր աէրօպլանները ռմբակոծում էին երկաթուղին Բատօնի մօտ, որով խորտակեցինք գնացքները և փչացրինք երկաթուղին:

Խմբ.-հր. Լ. Վարդապետեան

Печатать дозволено военной цензурой